ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«25» 06 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-21/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.08.2015թ. թիվ 1/73-1/23622-15 գրությամբ ներկայացված «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01832902) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ պաշտպանության նախարարության 12.08.2015թ. թիվ ԴՎԱ/1925 գրության հիման վրա, 31.08.2015թ. թիվ 1/73-1/23622-15 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ խնդրելով

ուսումնասիրել «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ Նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.08.2015թ. թիվ ԴՎԱ/1925 գրության պատճենը:

2. «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 30.09.2015թ. ներկայացրած գրությամբ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն հայտնել է, որ դեռևս 19.05.2015թ., 02.06.2015թ. և 05.06.2015թ. Ընկերությունը իր գործունեության հետ կապված առաջացած հարկերի՝ ավելացած արժեքի հարկի մասով կատարել է համապատասխանաբար՝ 1.000.000 (մեկ միլիոն, 80.000.000 (ութսուն միլիոն) և 6.000.000 (վեց միլիոն) վճարումներ, որը կազմել է նախատեսված հարկերից ավելի, այսինքն առաջացել է գերավճար:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում Ընկերության կողմից ներկայացվել է հայտը:

Ընթացակարգի շրջանակներում, ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարության հարցման ՀՀ ֆինանսների նախարարությունը հուլիսի 7-ի դրությամբ ունեցել է 41.027.394 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

ՀՀ ֆինանսների նախարարության և Ընկերության փոխադարձ հաշվարկների արդյունքում նախարարության կողմից տրամադրվել է լրացուցիչ գրություն, ըստ որի վերջինիս հայտնվել է, որ ճշտված հաշվարկների արդյունքում 06.07.2015թ. դրությամբ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի հանդեպ պարտավորություն չունի, ընդ որում նույն 07.07.2015թ. դրությամբ Շենգավիթի հարկային տեսչության կողմից

տրամադրված փոխադարձ հաշվարկների ակտում նշված տվյալները բացարձակ նույնական են՝ բացառությամբ ամսաթիվը:

«ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն նշել է, որ Շենգավիթի հարկային տեսչության 03.09.2015թ. փոխադարձ հաշվարկների ակտի համաձայն՝ Ընկերությունը 07.07.2015թ. դրությամբ ունեցել է 14.108.078 (տասնչորս միլիոն հարյուր ութ հազար յոթանասուն ութ) ՀՀ դրամ գերավճար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավուն չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝

ա. ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցանը,

բ. գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ,

գ. որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

դ. օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

ե. երբ առկա է նույն մասի 3-րդ կետով նախատեսված հանգամանքը:

Վերը նշվածում սահմանվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու 4-րդ մասով թվարկված հիմքերը:

Ընկերությունն անդրադարձել է յուրաքանչյուրին, նշելով՝

«ա» կետով նախատեսված է պայմանագրային պարտավորության խախտումը մեկից ավելի անգամ, որը տվյալ դեպքում բացակայում է,

«բ» կետոով նախատեսված է կեղծ տվյալ ներկայացելը, տվյալ դեպքում Ընկերության կողմից ներկայացվել է լիարժեք իրականությանը համապատասխանող տվյալներ, մասնավորապես՝ Ընկերությունը կատարելով իր պարտավորությունը ամբողջությամբ, սակայն հարկային մարմնի կողմից ոչ ճիշտ հաշվարկների արդյունքում վերջինիս տվյալ է ներկայացրել առ այն, որ Ընկերությունը ունի պարտավորություն: Այնուհետև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վերացվել է տեխնիկական սխալը՝ փոխադարձ հաշվարկների շնորհիվ: Այսպիսով, Ընկերությունը որևէ դիտավորություն չի ունեցել կեղծ տվյալ ներկայացնել, ընդամենը օրենսդրությամբ նախատեսված գումարից անգամ ավելին վճարելուց հետո ներկայացրել է հայտ:

Ինչ վերաբերում է փոխադարձ հաշվարկների ակտում նշված 10% ակտի հարկային մարմնի զարգացման ֆոնդի գումարին, ապա Ընկերությունը հայտնել է, որը դա առաջացել է հաշվանցված կամ հաշվանցման ենթակա գումար գերավճարից, այդ իսկ պատճառով հարկային մարմինը հայտնել է, որ Ընկերությունը պարտավորություն չունի: Բացի այդ, նույն հարկային մարմնի տեխնիկական պատճառներով զարգացման ֆոնդի գումարի վճարումը վերջինիս կողմից հաստատվում է շատ ավելի ուշ:

«գ» կետով նախատեսված է պայմանագրից հրաժարվելը, որը տվյալ դեպքում բացակայում է:

«դ» կետով նախատեսված է հակամրցակցային վարքագիծ, որը Ընկերության կողմից բացակայում է:

«ե» կետով նախատեսված գործադիր մարմինը դատապարտված չի եղել:

Ընկերությունը գտել է, որ բացակայում է «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիղների ցուցակում ներառելու համար որևէ հիմք:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ պաշտպանության նախարարությունը 12.08.2015թ. թիվ ԴՎԱ/1925 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն 09.09.2015թ. թիվ ԴՎԱ/2132 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ալյուրի ձեռքբերման նպատակով կազմակերպված Ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ 18.07.2015թ. կատարվել է հարցում՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ընթացակարգի առաջին և հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցների ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Պատվիրատուն նշել է, որ հարցման մասին ՀՀ ֆինանսների նախարարությունից 27.07.2015թ. ստացված եզրակացության համաձայն՝ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն ունեցել է ժամկետանց պարտքեր, ուստի հայտերի գնահատման արդյունքերի հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը մերժվել է և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով մասնակցի տվյալները ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը գտնում է, որ անկախ ընթացակարգում զբաղեցրած տեղից, մասնակիցն իրավունք չունի մասնակցել

ընթացակարգին, եթե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ: Իսկ հայտերի բացման նիստից 16-18 օր հետո հարկային պարտավորությունների «ճշգրտումը» կամ «զրոյացումը», ՀՀ պաշտպանության նախարարության կարծիքով, հիմք չի կարող հանդիսանալ մասնակցին հաղթող (ընտրված) ճանաչելու համար:

4. ՍՑ-ԳԲԽ-21/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 31.08.2015թ. թիվ 1/73-1/23622-15 գրությամբ ներկայացված «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլուրի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***2015թ. հուլիսի 7-ին*** հայտ է ներկայացրել նաև «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ***(07.07.2015թ.)*** չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 18.07.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի կողմից ***2015թ. հուլիսի 7-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն 2015թ. հուլիսի 7-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ***ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն***՝ 41 027 394 ՀՀ դրամի չափով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.07.2015թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով որոշել է. «Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած եզրակացությունը՝ մերժել «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.07.2015թ.) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ»:

6. «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն 26.08.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ***2015թ. հուլիսի 6-ի դրությամբ*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ՝ ներկայացնելով ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության գրության պատճենը:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 31.08.2015թ. թիվ 1/73-1/23622-15 գրությամբ Կենտրոնին է տրամադրել «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի ***07.07.2015թ.*** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի տարածքային հարկային տեսչության գրությունը, որի համաձայն՝ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի 07.07.2015թ. դրությամբ բյուջեի հանդեպ ժամկետանց պարտավորությունը կազմում է ***27 219 099*** ՀՀ դրամ:

8. Ընկերությունը 04.09.2015թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ***2015թ. հուլիսի 7-ի դրությամբ*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ՝ ներկայացնելով ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության 03.09.2015թ. փոխադարձ հաշվարկների ակտի պատճենը: Շենգավիթի հարկային տեսչության

փոխադարձ հաշվարկների վերոհիշյալ ակտի համաձայն՝ «Ակտի 10 %» հարկատեսակի մասով Ընկերությունը ունի 6186 ՀՀ դրամ ապառք, 43640 ՀՀ դրամ տույժ և 380038 ՀՀ դրամ տուգանք:

9. Կենտրոնը 07.09.2015թ. թիվ 01/04.1/2332-15 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացրել է Շենգավիթի հարկային տեսչության 03.09.2015թ. փոխադարձ հաշվարկների ակտի պատճենը՝ խնդրելով սեղմ ժամկետում հայտնել, թե Ընկերությունը ***07.07.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

10. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.09.2015թ. թիվ 1/73-1/26356-15 գրությամբ ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության գրությունը, որի համաձայն՝ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի 07.07.2015թ. դրությամբ բյուջեի հանդեպ ժամկետանց պարտավորությունը կազմում է ***429 864*** ՀՀ դրամ՝ համակարգի զարգացման ֆոնդի գծով, որը ևս համարվում է հարկային պարտավորություն:

5. ՍՑ-ԳԲԽ-21/15 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ի 30.09.2015թ. գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.08.2015թ. թիվ ԴՎԱ/1925 և 09.09.2015թ. թիվ ԴՎԱ/2132 գրությունները և կից փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության 31.08.2015թ. թիվ 1/73-1/23622-15 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն

ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 125-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Այսպիսով, «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն 07.07.2015թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն՝ համակարգի զարգացման ֆոնդի գծով՝ ***429 864*** ՀՀ դրամի չափով, որն ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 18.09.2015թ. թիվ 1/73-1/26356-15 գրությամբ ներկայացված ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության գրության, ևս համարվում է հարկային պարտավորություն, ինչի պայմաններում Ընկերությունը, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին

մասի 2-րդ կետի համաձայն, իրավունք չուներ մասնակցելու գնումների ընթացակարգրգին:

Մինչդեռ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ն «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 07.07.2015թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.07.2015թ.) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, ինչը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու պայմաններում Ընկերության կողմից հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 31.08.2015թ. թիվ 1/73-1/23622-15 գրությամբ «ՄՀԵՐՄԱՐ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01832902) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-21/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան